

*Հաստատված է
Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2021 թվականի հունիսի 23-ի թիվ 3 արձանագրությամբ*

**ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում հիմնադրված և գործող «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման, գործունեության, նիստերի գումարման և վարման, ինչպես նաև հանձնաժողովի լուծարման կարգը:
2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Հիմնադրամների մասին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված իմաստներով:

**ԳԼՈՒԽ 2. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՁևԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԸ**

3. Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման նպատակով Հիմնադրամի կազմում ստեղծվում է ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով:
4. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը գործում է Օրենքի, Հիմնադրամի կանոնադրության, սույն կարգի և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված այլ կարգերի հիման վրա:
5. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամներից, որոնք են.
 - ա) Հիմնադրամի գործադիր տնօրենը
 - բ) Տնօրենի տեղական/Օրագրերի ղեկավար
 - գ) Փոխհատուցումների փոխտնօրեն
 - դ) Հաշվապահը 23
 - ե) Իրավաբանը
6. Հանձնաժողովը նախագահում է Հիմնադրամի տնօրենը:
7. Հիմնադրամի տնօրենն ի պաշտոն է հանդիսանում է ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ:
8. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամները նշանակվում են Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից անժամկետ:



ԳԼՈՒԽ 3. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի գործառնություններն են՝
 - 9.1. Պարտավորությունների գնահատումը ըստ ժամկետների և ըստ գումարների:
 - 9.2. Պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Հիմնադրամի Գործադիր հանձնաժողովին
 - 9.3. Օրենքով նախատեսված հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում, համապատասխան պետական մարմնի կողմից զինձառայողի, ինչպես նաև շահառուի (շահառուների) վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) հիման վրա հատուցման գումարների վերաբերյալ որոշումների ընդունումը:
 - 9.4. Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարման ժամկետները հետաձգելու մասին որոշում ընդունելու առաջարկի ներկայացումը:
 - 9.5. Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն պարտատոմսեր կամ այլ արժեթղթեր թողարկելու վերաբերյալ առաջարկի ներկայացումը:

ԳԼՈՒԽ 4. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
11. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերը գումարվում են Հիմնադրամի գտնվելու վայրում: Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի արտագնա և արտահերթ նիստ կարող է գումարվել նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Հանձնաժողովի նախագահի պարտականությունները իրականացնող անդամի նախաձեռնությամբ:
12. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ:
13. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, առանձին հարցերի քննարկումների ժամանակ, կարող են մասնակցել նաև հրավիրված անձինք, որոնց ցանկը, ըստ հարցերի սահմանվում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի սովյալ օրվա նիստի օրակարգով:
14. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները կարող են մասնակցել հանձնաժողովի բոլոր նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:
15. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստը նախագահում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նախագահը:
16. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նախագահը՝
 - 16.1 վարում է Հանձնաժողովի նիստերը,
 - 16.2 օրակարգի շրջանակներում ձայն է տալիս ելույթների համար,
 - 16.3 զեկուցողին ուղղված հարցերի և ելույթների համար ձայն է տալիս ըստ հաջորդականության,



Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կանոնակարգ

- 16.4 իրականացնում է կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
17. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի 5 անդամներից առնվազն 3-ը:
 18. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ, ընդ որում հանձնաժողովի անդամների ունեն հավասար ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահողի ձայնը որոշիչ է:
 19. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերը ձայնագրվում են: Հանձնաժողովի նիստերի վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվում: Հանձնաժողովի կողմից որդեգրված մոտեցումների և սկզբունքների վերաբերյալ կազմվում է գրավոր փաստաթուղթ, որը ստորագրվում է Հանձնաժողովի անդամների կողմից:
 20. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի որոշումները կարող են փաստաթղթավորվել:
 21. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստման աշխատանքները կոորդինացնում է Հիմնադրամի իրավաբանը և վերահսկում է Հիմնադրամի գործադիր տնօրենը:
 22. Հանձնաժողովում քննարկվելիք հարցերի վերաբերյալ նյութերը պատրաստվում են համապատասխան ստորաբաժանման/աշխատակիցների կողմից նիստից առնվազն 1 օր առաջ:

ԳԼՈՒԽ 5. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

26. Հանձնաժողովը լուծարվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հանձնաժողովի լուծարման վերաբերյալ որոշման ընդունման միջոցով:

